

1.3. Գներ և սակագներ

Գների փոփոխություններն ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների 2005թ. հունվար-օգոստոսին

(նախորդ ամսվա նկատմամբ, %)

	Սպառողական գների ինդեքս ¹⁾	Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս ²⁾	Գների ինդեքսը շինարարությունում ³⁾	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս ⁴⁾	Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքս ⁵⁾	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս ⁶⁾
Հունվար	105.4	100.5	100.7	97.3	98.2	100.3
Փետրվար	99.3	94.8	99.9	98.9	98.4	100.6
Մարտ	99.1	101.2	122.9	98.7	99.6	98.3
Ապրիլ	99.1	97.4	99.9	98.5	97.3	103.4
Մայիս	100.1	99.9	100.0	97.4	97.6	100.6
Հունիս	98.6	101.8	100.1	100.7	79.3	100.9
Հուլիս	95.5	96.3	100.1	99.5	81.8	101.1
Օգոստոս	98.6	102.4	101.0	106.2	88.0	103.0
2005թ. օգոստոսը 2004թ. դեկտեմբերի նկատմամբ	95.5	94.1	125.1	96.9	90.3*)	105.7*)
2005թ. հունվար-օգոստոսը 2004թ. հունվար-օգոստոսի նկատմամբ	101.1	110.6	117.6	87.9	86.8	104.9

*) 2005թ. օգոստոսի և 2004թ. դեկտեմբերի ընթացիկ գներով հաշված:

¹⁾ Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության մարզերում 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:

²⁾ Գների դիտարկումը կատարվում է արդյունաբերական ոլորտի 254 բազային կազմակերպություններում՝ 888 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով: Գների ինդեքսի հաշվարկը կատարվում է ժողովրդական տնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչի (ԺՏԵՀԴ) համաձայն: Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչին (ՏԳՏԴ) համապատասխան գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը մշակման փուլում է:

³⁾ Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:


⁴⁾ Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնառաքումների դիտարկված սակագների հիման վրա:

⁵⁾ Ըստ 7600 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքի իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:

⁶⁾ Ըստ 7600 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման գների և ծավալների հետազոտման տվյալների:

Գների, սակագների աճի տեմպերը 2004-2005թթ. հունվար-օգոստոսին


(նախորդ տարվա հունվար-օգոստոսի նկատմամբ, %)



Արտարժութային շուկա: 2005թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետության սպառողական շուկայում արձանագրված 1.4% գնանկումն ուղեկցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 3.9% հավելաճով: Օգոստոսին 2004թ. դեկտեմբերի համեմատ սպառողական զները և հաշվարկային փոխարժեքը նվազել են համապատասխանաբար 4.5% և 5.4%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է նմանատիպ միտում և սպառողական զների ու հաշվարկային փոխարժեքի նվազումը կազմել է համապատասխանաբար 0.5% և 8.4%: 2005թ. օգոստոսին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային միջին փոխարժեքը կազմել է 460.99 դրամ, ինչը 10.9% ցածր է նախորդ տարվա օգոստոսի համապատասխան ցուցանիշից (517.63 դրամ):

ՀՀ սպառողական զների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի փոփոխությունները 2004-2005թթ. հունվար-օգոստոսին


(Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)



Սպառողական զներ: 2005թ. օգոստոսին ՀՀ սպառողական շուկայում արձանագրված 1.4% գնանկումը պարենային որոշ ապրանքատեսակների զների սեզոնային փոփոխությունների արդյունք է:

Սպառողական զների հավելաճը 1996-2005թթ. օգոստոսին

(Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)




Սպառողական գների փոփոխությունները 2005թ. օգոստոսին

(%)

	2005թ.				
	օգոստոսը				հունվար-օգոստոսը 2004թ. հունվար-օգոստոսի նկատմամբ
	2005թ. հուլիսի նկատմամբ	2004թ. դեկտեմբերի նկատմամբ	2004թ. օգոստոսի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
Սպառողական գների ինդեքս	98.6	95.5	98.0	106.9	101.1
<i>այդ թվում՝</i>					
պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	97.8	93.3	96.8	108.7	101.7
ոչ պարենային ապրանքների	100.4	99.6	100.0	102.3	99.7
ծառայությունների	100.4	101.2	100.8	104.3	100.0

2005թ. հունվար-օգոստոսին սպառողական գների միջին ամսական նվազումը կազմել է 0.55%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրված 0.05% նվազման դիմաց:

ՀՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2005թ. հունվար-օգոստոսին (նախորդ ամսվա համեմատ, %)



Պարենային ապրանքների գներ: Պարենային ապրանքների շուկայում 2005թ. օգոստոսին հուլիսի համեմատ արձանագրվել է 2.5% գնանկում, ինչը հիմնականում հետազոտվող պարենային 13 ապրանքախմբերից 7-ում գրանցված 18.5-0.4% գնանկման արդյունք է:

Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի

(%)


	2005թ.				
	օգոստոսը				հունվար-օգոստոսը 2004թ. հունվար-օգոստոսի նկատմամբ
	2005թ. հուլիսի նկատմամբ	2004թ. դեկտեմբերի նկատմամբ	2004թ. օգոստոսի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
Պարենային ապրանքներ	97.8	93.3	96.8	108.7	101.7
(ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)					
Պարենային ապրանքներ	97.5	92.6	96.4	109.6	101.9
հացամթերք	98.8	96.2	92.4	121.0	93.3
մսամթերք	100.3	102.1	101.3	124.4	104.5
ծկնամթերք	103.3	59.9	118.6	134.3	187.2

	2005թ.				հունվար- օգոստոսը 2004թ. հուն- վար-օգոստո- սի նկատմամբ
	օգոստոսը				
	2005թ. հուլիսի նկատ- մամբ	2004թ. դեկտեմբերի նկատմամբ	2004թ. օգոստոսի նկատ- մամբ	2002թ. նկատ- մամբ	
կաթնամթերք	99.6	98.4	105.8	105.3	103.4
ծու	94.7	76.2	94.7	103.0	108.1
կենդանական և բուսական յուղ	99.4	98.0	100.5	107.7	98.9
միրգ	81.5	71.2	74.9	94.8	110.0
բանջարեղեն և կարտոֆիլ	90.9	79.5	98.2	74.2	105.4
շաքարավազ	99.2	95.0	96.5	94.0	98.1
սուրճ, թեյ, կակաո	100.1	101.7	102.3	103.8	100.6
հրուշակեղեն	100.0	100.3	103.3	107.5	103.6
այլ մթերքներ	100.0	101.1	103.1	102.8	102.5
ոչ ոգելից խմիչք	100.2	105.3	106.0	115.9	107.1
<i>Ոգելից խմիչք և ծխախոտ</i>	<i>100.1</i>	<i>100.3</i>	<i>100.1</i>	<i>101.0</i>	<i>99.4</i>

2005թ. հունիս-օգոստոսին հանրապետությունում գրանցվել է մրգի 46.3% ընդհանուր գնանկում, ընդ որում, օգոստոսին հուլիսի համեմատ գնանկումը կազմել է 18.5%, ինչը հիմնականում խնձորի 30.5%, սալորի 30.2%, տանձի 23.5%, դեղձի 24.6%, բալի 20.6%, խաղողի 16.7%, ինչպես նաև բոստանային մշակաբույսերից ձմերուկի և սեխի՝ համապատասխանաբար 55.8% և 59.5% գնանկման արդյունք է: Ծիրանի գինն աճել է 2.2 անգամ: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում մրգի գները նվազել են 30.0-7.3% (գնանկման համեմատաբար բարձր ցուցանիշ արձանագրվել է ք. Վաղարշապատում): Մայրաքաղաքում մրգի գները նվազել են 19.0%:


Մրգի գների փոփոխությունները 2003-2005թթ. հունվար-օգոստոսին

(նախորդ ամսվա նկատմամբ, %)



Բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում 2005թ. հունիս-օգոստոսին արձանագրվել է 40.5% գնանկում:

Բանջարեղենի և կարտոֆիլի գների փոփոխությունները 2003-2005թթ. հունվար-օգոստոսին
(նախորդ ամսվա նկատմամբ, %)



2005թ. օգոստոսին հուլիսի համեմատ բանջարեղենի և կարտոֆիլի գնանկումը կազմել է 9.1%, ինչը սմբուկի (76.7%), կանաչ պղպեղի (59.0%), լոլիկի (56.2%), գազարի (19.8%), սխտորի (18.4%), սեղանի ճակնդեղի (16.3%), գլուխ սոխի (12.4%) գնանկման արդյունք է: Կաղամբի, կանաչ լոբու, կարտոֆիլի գները նշված ժամանակահատվածում նվազել են 8.3-1.3%: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում արձանագրվել է բանջարեղենի և կարտոֆիլի 17.0-5.4% գնանկում (մայրաքաղաքում բանջարեղենի և կարտոֆիլի գները նվազել են 7.6%):

2005թ. օգոստոսին շարունակվել է դեռևս փետրվարից հանրապետությունում գրանցված ձվի գնանկման միտումը և 7 ամիսների ընդհանուր գնանկումը կազմել է 26.3%, այդ թվում, օգոստոսին հուլիսի համեմատ ձվի գնանկումը կազմել է 5.3%: Հանրապետության դիտարկված 10 քաղաքներում ձվի գները նվազել են 8.9-1.9% (համեմատաբար բարձր գնանկում գրանցվել է ք. Վաղարշապատում):

2005թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետությունում գրանցվել է մսամթերքի 0.3% գնաճ, ինչը հիմնականում պայմանավորվել է հավի բրինձի և խոզի մսի համապատասխանաբար՝ 4.8% և 0.5% գնաճով: Հանրապետության դիտարկված 7 քաղաքներում արձանագրվել է մսամթերքի 0.3-4.2% գնաճ (համեմատաբար բարձր գնաճ գրանցվել է ք. Եղեգնաձորում): Մայրաքաղաքում մսամթերքի գնաճը կազմել է 0.4%, իսկ մյուս 3 քաղաքներում արձանագրվել է 2.3-0.1% գնանկում:

Ոչ պարենային ապրանքների գներ. Ոչ պարենային ապրանքների շուկայում 2005թ. օգոստոսին հուլիսի համեմատ գրանցված 0.4% գնաճին մեծապես նպաստել է ոսկերչական ապրանքների 2.3%, շինանյութերի 1.8% (ցեմենտի 11.4% գնաճով պայմանավորված), կոշիկեղենի 0.7% գնաճը:

Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները


(%)

	2005թ.					հունվար-օգոստոսը 2004թ. հունվար-օգոստոսի նկատմամբ
	օգոստոսը				2002թ. նկատմամբ	
	2005թ. հուլիսի նկատմամբ	2004թ. դեկտեմբերի նկատմամբ	2004թ. օգոստոսի նկատմամբ	2002թ. նկատմամբ		
Ոչ պարենային ապրանքներ այդ թվում՝	100.4	99.6	100.0	102.3	99.7	
հագուստ և գործվածք	100.0	97.5	97.8	97.2	97.5	
վառելիք	99.7	106.9	114.6	144.3	119.5	
կահույք	99.9	97.2	94.1	88.0	91.2	
գորգեղեն	100.2	99.6	98.8	101.9	98.5	
տեքստիլեղեն	100.2	100.0	101.1	99.1	100.8	
կենցաղային էլեկտրաապրանքներ	99.9	97.8	94.3	88.0	92.8	
խոհանոցային սպասք	99.7	99.9	99.2	99.2	97.7	
լվացամիջոցներ	100.3	100.5	100.7	102.9	100.8	
շինանյութեր	101.8	100.1	99.7	97.2	98.1	
այգեգործական ապրանքներ	100.0	102.9	104.5	111.6	104.1	
դեղամիջոցներ	99.6	96.4	95.8	89.5	97.3	
անձնական օգտագործման մեքենաներ և բեռզին	103.5	101.7	104.9	127.6	103.8	
մշակույթի ապրանքներ	100.1	97.9	92.0	83.9	87.8	
գրենական պիտույքներ	100.2	102.2	102.8	103.4	102.1	
զեղահարդարման ապրանքներ	99.2	99.2	99.1	101.2	100.1	
ոսկերչական ապրանքներ	102.3	96.4	98.8	119.8	95.2	
անձնապիտո ապրանքներ	98.9	97.9	96.0	95.4	97.3	

2005թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետությունում գրանցվել է բեռզինի և դիզելային վառելիքի համապատասխանաբար 3.3% և 5.5% գնաճ, իսկ 2004թ. դեկտեմբերի համեմատ՝ 2.5% և 1.3% գնաճ:

Բեռզինի ներմուծման¹ և մանրածախ² գները ՀՀ-ում 2004թ. հունվար - 2005թ. օգոստոս ամիսներին

(դրամ 1 լիտրի համար)




¹ Ներկրվող բոլոր տեսակի բեռզինների միջին կշռված գին:

² «Ռեզոլյար» տեսակի բեռզինի միջին գին:

Դիզելային վառելիքի ներմուծման և մանրածախ գները 77-ում
2004թ. հունվար - 2005թ. օգոստոս ամիսներին


(դրամ 1լիտրի համար)



2005թ. օգոստոսին 2004թ. օգոստոսի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի և դիզելային վառելիքի համապատասխանաբար 3.4% և 27.5%, իսկ 2002թ. համեմատ՝ համապատասխանաբար՝ 27.2% և 57.4% գնաճ:


Բենզինի ներմուծման և մանրածախ գների փոփոխությունները
2004թ. հունվար-2005թ. օգոստոս ամիսներին

(2004թ. հունվարի նկատմամբ, %)



Դիզելային վառելիքի ներմուծման և մանրածախ գների փոփոխությունները
2004թ. հունվար - 2005թ. օգոստոս ամիսներին

(2004թ. հունվարի նկատմամբ, %)



Ծառայությունների սակագներ: 2005թ. օգոստոսին հուլիսի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում արձանագրված սակագների 0.4% հավելաճը հիմնականում պայմանավորվել է տրանսպորտի ծառայությունների սակագների 2.6% հավելաճով (կապված օդային տրանսպորտի 5.5% և ներքաղաքային միկրոավտոբուսի 2.4% ուղևորների թանկացման հետ):

Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները

(%)

	2005թ.				
	օգոստոսը				հունվար-օգոստոսը 2004թ. հունվար-օգոստոսի նկատմամբ
	2005թ. հուլիսի նկատմամբ	2004թ. դեկտեմբերի նկատմամբ	2004թ. օգոստոսի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
Ծառայություններ, ընդամենը	100.4	101.2	100.8	104.3	100.0
<i>այդ թվում՝</i>					
կենցաղային բնույթի	100.1	102.4	102.1	99.3	100.3
բնակարանային-կոմունալ	100.0	101.5	101.3	104.5	101.4
բուժապասարկման	100.0	100.4	99.9	99.4	99.4
տրանսպորտի	102.6	102.0	100.0	105.8	96.5
կապի	99.2	96.6	97.4	104.1	96.6
մշակույթի	97.5	99.8	110.7	152.0	115.2
կրթության համակարգի	100.0	98.7	99.8	100.7	100.3
հանգստի կազմակերպման	100.0	108.8	103.5	108.7	100.0
հանրային սննդի	100.1	102.1	102.9	115.2	105.6
իրավական և բանկային	100.0	100.7	100.7	100.7	100.3

Սպառողական գների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները: Հանրապետությունում դիտարկված բոլոր քաղաքներում 2005թ. օգոստոսին հուլիսի համեմատ սպառողական գները նվազել են 2.8-1.1%, ընդ որում, գնանկման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Վաղարշապատում: Մայրաքաղաքում սպառողական գները նվազել են 1.1%:

Պարենային ապրանքների գները 2005թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետությունում դիտարկված բոլոր քաղաքներում նվազել են 4.9-1.9% (համեմատաբար մեծ գնանկում արձանագրվել է ք. Վաղարշապատում): Բ. Երևանում պարենային ապրանքների գնանկումը կազմել է 2.1%:

Հանրապետության հետազոտված բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները 2005թ. օգոստոսի 30-ի դրությամբ

(դրամ կգ-ի համար)

	Միս տավարի	Պանիր	Կարագ	Բուսական յուղ, լիտր	Չու, տասնյակի համար	Շաքարավազ	Կարտոֆիլ	Գլուխ սոխ	Կաղամբ	Խնձոր
ՀՀ, միջինը	1426	1306	1638	634	468	249	124	187	81	276
<i>այդ թվում.</i>										
Երևան	1438	1321	1639	640	468	245	128	192	83	300
Գյումրի	1400	1308	1600	659	522	256	98	183	61	378
Վանաձոր	1466	1191	1572	579	495	243	117	200	74	209
Վաղարշապատ	1460	1300	1740	596	410	250	118	108	68	240
Թալին	1500	1300	1650	630	400	250	120	150	80	150
Դիլիջան	1500	1200	1800	615	475	265	120	170	100	250
Հրազդան, Չարենցավան	1430	1360	1570	620	450	260	127	200	100	200
Եղեգնաձոր	1400	1200	1600	650	478	260	150	200	100	200
Մարտունի	1300	1300	1650	650	480	260	120	200	60	250
Կապան	1200	1300	1620	668	480	266	138	232	114	180
Արտաշատ	1400	1175	1500	587	400	254	130	178	100	375

... - դիտարկման պահին ապրանքը բացակայել է:

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, ձվի՝ տասնյակի և բուսական յուղի՝ 1 լիտրի հաշվարկով) 2005թ. օգոստոսի 30-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 6389 դրամ (ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Դիլիջանում՝ 6495 դրամ, իսկ ամենացածրը՝ ք. Վանաձորում՝ 6146 դրամ), ինչը 2.4% գերազանցել է նույնաժամանակահատվածի 2004թ. օգոստոսի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքը (6238 դրամ):

Հանրապետության դիտարկված 7 քաղաքներում 2005թ. օգոստոսին հուլիսի համեմատ գրանցվել է ոչ պարենային ապրանքների 0.4-0.8% գնաճ (մայրաքաղաքում գնաճը կազմել է 0.4%), իսկ Վանաձոր, Եղեգնաձոր և Հրազդան, Չարենցավան քաղաքներում՝ համապատասխանաբար 0.4%, 0.3% և 0.2% գնանկում:

2005թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետության դիտարկված 8 քաղաքներում գրանցվել է ծառայությունների սակագների 0.3-1.4% հավելաճ (հավելաճի համեմատաբար բարձր ցուցանիշ արձանագրվել է ք. Եղեգնաձորում): Ք թալիհում արձանագրվել է ծառայությունների սակագների 0.4% նվազում, իսկ ք. Գյումրիում պահպանվել է սակագների նախորդ ամսվա մակարդակը:

Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2005թ. օգոստոսին 2004թ. դեկտեմբերի համեմատ, ըստ դիտարկված քաղաքների և ապրանքախմբերի

	Սպառողական գների ինդեքսը	այդ թվում					ծառայությունների
		սպառման ապրանքների	դրանցից			ծառայությունների	
			պարենային ապրանքների	ոգելից խմիչքի և ծխախոտի	ոչ պարենային ապրանքների		
ՀՀ, ընդամենը	95.5	94.4	92.6	100.3	99.6	101.2	
<i>այդ թվում՝</i>							
Երևան	96.2	95.1	93.6	100.1	99.4	101.4	
Գյումրի	94.8	94.0	92.3	100.2	99.1	98.1	
Վանաձոր	94.7	93.4	91.9	101.7	96.9	100.7	
Վաղարշապատ	93.4	91.8	88.8	100.7	101.2	101.5	
Թալիհ	93.0	91.6	88.5	100.2	101.5	99.6	
Դիլիջան	95.8	94.4	92.5	101.7	99.5	102.8	
Հրազդան, Չարենցավան	95.0	93.5	91.5	100.0	99.3	101.9	
Եղեգնաձոր	96.1	95.1	93.6	100.0	99.3	101.0	
Մարտունի	95.5	94.2	92.0	99.7	101.2	101.5	
Կապան	93.8	92.0	88.6	102.5	101.6	102.3	
Արտաշատ	95.5	94.4	90.9	103.9	101.0	100.1	

Արդյունաբերողների արտադրանքի գներ: 2005թ. օգոստոսին 2004թ. դեկտեմբերի համեմատ արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի գնանկումը հանրապետությունում կազմել է 5.9%, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրված 9.8% գնաճի դիմաց:

Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխություններն ըստ արդյունաբերության ճյուղերի

	2005թ.			
	օգոստոսը			հունվար-օգոստոսը 2004թ. հունվար-օգոստոսի նկատմամբ
	2005թ. հուլիսի նկատմամբ	2004թ. օգոստոսի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
Ամբողջ արդյունաբերությունը	102.4	107.4	148.5	110.6
<i>այդ թվում՝</i>				
Էլեկտրաէներգետիկա	100.3	98.5	96.8	97.4
գունավոր մետալուրգիա	104.2	128.2	320.4	146.1
քիմիական, նավթաքիմիական արդյունաբերություն	100.1	100.8	127.1	100.3


	2005թ.			
	օգոստոսը			հունվար-օգոստոսը 2004թ. հունվար- օգոստոսի նկատմամբ
	2005թ. հուլիսի նկատմամբ	2004թ. օգոստոսի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
մեքենաշինություն	103.1	108.2	110.8	103.1
այլ արդյունաբերական արտադրու- թյուն(ուկերչական արդյունաբերություն)	103.6	96.5	113.4	98.5
անտառային, փայտամշակման, թղթի- ցելյուլոզի արդյունաբերություն	97.1	111.3	102.4	101.7
շինանյութերի արդյունաբերություն	105.4	104.4	112.7	103.9
թեթև արդյունաբերություն	92.6	97.9	99.7	103.3
սննդի (ներառյալ այլուրի ու համակց - ված կերերի) արդյունաբերություն	101.7	96.8	123.6	94.7
պոլիգրաֆիական արդյունաբերություն	88.5	87.0	81.7	83.5

Բեռնափոխադրումների սակագներ: 2005թ. օգոստոսին հուլիսի համեմատ բեռնափոխադրումների սակագների հավելաճը հանրապետությունում կազմել է 6.2%, ինչն օդային (12.9%), խողովակաշարային (7.7%), երկաթուղային (6.5%) տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների հավելաճի արդյունք է: Ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների հավելաճը նշված ժամանակահատվածում կազմել է 2.1%:

2005թ. օգոստոսին 2004թ. օգոստոսի համեմատ բեռնափոխադրումների սակագների ինդեքսը կազմել է 94.1%, այդ թվում, երկաթուղային տրանսպորտով՝ 90.8%, ավտոմոբիլայինով՝ 109.6%, օդայինով՝ 101.8%, խողովակաշարային տրանսպորտով՝ 91.6%, իսկ հունվար-օգոստոսին նախորդ տարվա հունվար-օգոստոսի համեմատ՝ համապատասխանաբար 87.9%, 83.8, 107.7, 85.7, 87.5%:

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների զննան զներ: 2005թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետությունում գրանցվել է գյուղացիական տնտեսությունների կողմից իրացված գյուղատնտեսական մթերքի 12.0% զնանկում (նախորդ տարվա օգոստոսի համեմատ իրացված գյուղատնտեսական մթերքի զնանկումը կազմել է 8.1%, այդ թվում բուսաբուծական մթերքինը՝ 25.3%), ինչին մեծապես նպաստել են արտադրված բանջարեղենի, և հատկապես պտղի բերքի առատությամբ պայմանավորված պահանջարկի նկատմամբ առաջարկի առաջնայնությունը և իրացվող ապրանքների սեզոնայնությունը: Գյուղատնտեսական մթերքի զնանկման առավել բարձր ցուցանիշներ արձանագրվել են Արմավիրի (37.8%) և Արարատի (25.5%) մարզերում:

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման զների ինդեքսները ՀՀ մարզերում 2005թ. օգոստոսին ըստ բուսաբուծության և անասնապահության ճյուղերի (նախորդ ամսվա նկատմամբ, %)



Մի խումբ գյուղատնտեսական ասրանքների իրացման և մանրածախ միջին գները ՀՀ-ում 2004-2005թթ. օգոստոսին

(դրամ)

	2004		2005	
	իրացման գին	մանրածախ գին	իրացման գին	մանրածախ գին
Խնձոր	163.1	402.0	120.6	270.2
Տանձ	237.0	553.5	177.5	356.2
Դեղձ	295.8	453.2	106.0	292.0
Ծիրան	219.2	655.5	187.0	401.3
Սալոր	167.5	333.0	86.8	171.1
Բալ	211.9	351.3	...	314.7
Ելակ	376.7	838.6	285.6	433.9
Չմերուկ	69.4	103.9	39.9	89.8
Սեխ	71.3	164.7	48.3	152.3
Կաղամբ	84.3	128.0	85.1	82.3
Գազար	52.8	208.4	73.3	167.3
Ճակնդեղ	124.4	194.5	50.5	169.2
Սխտոր	421.1	658.7	463.1	592.3
Սմբուկ	65.0	145.3	34.8	99.5
Կանաչ լոբի	156.5	243.0	153.5	238.5
Կարտոֆիլ	67.0	100.9	72.7	112.4

... _ դիտարկված տնտեսություններում իրացում (վաճառք) չի կատարվել:

2005թ. օգոստոսին 2004թ. օգոստոսի համեմատ գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսը կազմել է 91.9%, այդ թվում, բուսաբուծական մթերքինը՝ 74.7%, անասնապահական մթերքինը՝ 105.4%, իսկ հունվար-օգոստոսին 2004թ. հունվար-օգոստոսի համեմատ նշված ինդեքսները կազմել են համապատասխանաբար 86.8%, 64.7 և 105.5%:

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման միջին գները ՀՀ-ում 2001-2005թթ. օգոստոսին

(դրամ)

	Չափի միավորը	2001	2002	2003	2004	2005
Ցորեն	կգ	89	77	103	116	80
Գարի	- ,, -	67	62	71	99	72
Լոբի	- ,, -	300	450	...	350	350
Կարտոֆիլ	- ,, -	100	74	75	67	73
Կաղամբ	- ,, -	75	51	84	84	85
Վարունգ	- ,, -	58	84	38	94	75
Լոլիկ	- ,, -	40	38	33	40	42
Սմբուկ	- ,, -	44	46	45	65	35
Գազար	- ,, -	62	100	106	53	73
Գլուխ սոխ	- ,, -	73	77	94	106	102
Խնձոր	- ,, -	105	174	142	163	121
Տանձ	- ,, -	136	253	152	237	177
Խաղող	- ,, -	159	218	254	338	226
Մեղր	- ,, -	2689	2467	2487	2534	2581
Միս տավարի	- ,, -	842	899	967	1057	1139
ոչխարի	- ,, -	841	928	958	1051	1256
խոզի	- ,, -	1141	947	1082	1439	1530
Կաթ	լ	96	91	91	94	93
Մածուն	- ,, -	167	167	165	167	173
Պանիր (յուղոտ)	կգ	765	725	760	848	838
Չոլ	հատ	37	39	41	42	43
Միամյա խոտեր	կգ	17	19	21	20	17
Բազմամյա խոտեր	- ,, -	21	23	27	26	27

... _ դիտարկված տնտեսություններում իրացում (վաճառք) չի կատարվել:

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսներն ըստ մարզերի

(%)

	Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսը			Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը		
	2005թ. օգոստոսը		2005թ. հունվար-օգոստոսը 2004թ. հունվար-օգոստոսի նկատմամբ	2005թ. օգոստոսը		2005թ. հունվար-օգոստոսը 2004թ. հունվար-օգոստոսի նկատմամբ
	2005թ. հունիսի նկատմամբ	2004թ. օգոստոսի նկատմամբ		2005թ. հունիսի նկատմամբ	2004թ. օգոստոսի նկատմամբ	
ՀՀ, ընդամենը	88.0	91.9	86.8	103.0	105.5	104.9
<i>այդ թվում</i>						
Արագածոտն	98.3	102.2	98.4	105.3	106.2	105.2
Արարատ	74.5	75.9	93.8	100.2	105.3	103.8
Արմավիր	62.2	76.7	64.1	104.2	102.6	103.3
Գեղարքունիք	102.3	104.4	107.1	105.0	109.6	106.1
Լոռի	99.0	97.2	102.0	100.9	103.8	103.8
Կոտայք	99.3	88.7	90.7	101.0	106.0	107.8
Շիրակ	101.1	96.9	98.0	97.8	98.9	99.9
Սյունիք	97.7	98.7	102.0	99.4	113.3	109.0
Վայոց ձոր	102.5	119.5	113.9	104.9	112.7	108.1
Տավուշ	100.5	105.9	108.1	104.1	111.7	106.1